Ալեքսանդր Ծատուրյան

Ո՞ւր ես, հայ բըլբուլ . . .

(Գամառ-Քաթիպայի հուշարձանի առաջ)

Ո՞ւր ես, հայ բըլբուլ. ձայնիդ է կարոտ
Մեր հոգին էրված, մեր սիրտը յարոտ...

Սև սուգ է պատել մեր կյանք ու օրին,
Սև թուխպ է կապել մեր սար ու ձորին.
Գիշերն է անլույս մեր կյանքը մաշում,
Քո լույս-երգերի կարոտն ենք քաշում,
Էլ մեզ չես երգում գարնան առավոտ...
Ո՞ւր ես, հա՛յ բըլբուլ. երգիդ ենք կարոտ:

Սարե սար ընկած՝ մենք վա՜յ ենք կանչում..
Բախտավոր ազգեր մեզ չեն ճանաչում.
Ծարա՜վ, անոթի՜, օտա՜ր, խըղճալի՛,
Հաց-ջուր ենք ուզում մեզ թո՛ւյն են տալի .
Մեր ճամփեն դըժվա՜ր, մեր ճամփեն քարո՜տ...
Ո՜ւր ես, հա՛յ բըլբուլ, ձայնիդ ենք կարոտ:

Անտեր հոտի պես, անկայան կյանքում
Մենք հոշոտվում ենք գայլերի ճանկում...
Երկի՜նք ենք նայում - նա չի՛ մեղքանում,
Մեր լեզուն կըտրած՝ մեզ խաչ են հանում.

Անձեն մատա՛ղ ենք՝ կապած ձեռ ու ոտ . ..
Ո՞ւր ես, հա՛յ բըլբուլ, ձայնիդ ենք կարոտ.

Լեզվով չի՛ պատմվի հայու դարդ ու ցավ,
Հայի արյունով աշխարհ ներկվեցավ...
Սիրտըն է մըղկտում, սիրտն է սևանում.
Ոչ ոք մեր լացին ականջ չի՛ անում.
Եթիմ կանգնել ենք գերեզմանիդ մոտ...
Ո՞ւր ես, հայ բըլբուլ, երգիդ ենք կարոտ:

Բըլբո՛ւլ, դու մեզ հետ տանջվում ու լալիս,
Մեր անհույս օրին հույս էիր տալիս.
Դու երգում էիր ազգ ի՛մ, մի՛ սըգա,
Հուսով եմ, քո վարդ գարունն էլ կըգա...
Ո՞ւր ես, հա՛յ բըլբուլ, ձայնիդ ենք կարոտ.